




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՎՐՈՐԱ

Ա-79

ՇՏՈՒՐՄԱՅԻՆ ՈՐԵՐ



ՊԵՏՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

01 JAN 2009

5 19 NOV 2010

ՊՐՈԼԵՏԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆՎՈՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐ

№ 3

Ա Վ Ր Ո Ր Ա

(ՊԵՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆԻ ՅԵՐԻՏԲԱՆՎՈՐ)

ՃՏՈՒՐՄԱՅԻՆ ՈՐԵՐ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՊԵՏՐԱՏ

1 9 3 2

ՅԵՐԵՎԱՆ

21 FEB 2013

27702

2005 MAR 10

Պետերբուրգի տպարան
Դպրակիտ № 7018(բ)
Հրատ. № 1970
Պատ. 6578
Տիր. 2000



3358-84

Հանձնված է արտագրության 26/XII 1931 թ. Ստ. Ֆ. Բ
Ստորագրված է տպելու 7/V 1932 թ.

ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ Ե Պ Ի Շ Տ Ո Ւ Ր Մ

Դեպի շտուրմ, հեյ ընկերներ,
Դեպի գրոհ համատարած,
Մեզ ոտար չեն մարտի տեմպեր
Յեվ աշխատանք, ուժը լարած:

Այս որերում հերոսարար,
Վորպես մարտիկ արդֆինալանի,
Լարենք բոլոր ճիգերը մեր
Յեվ տանք թռիչք մեր պլանին:

Վերցնենք տեմպեր չերկաթակամ,
Նետվենք դեպի դիրքերը նոր,
Ոգտագործենք վայրկյանն անգամ
Յեվ ստեղծենք գործի ժամեր:

Ամեն մի ջիղ թող պրկանա,
Ամեն մկան դառնա մարտիկ,
Թող կուտակված ուժն արթնանա
Ու վճռական լինի մարտի:

Մինչև վերջը՝ ուժը լարած,
Վորպես տեմպի բալլչեիկներ —
Դեպի գրոհ համատարած,
Դեպի շտուրմ, հեյ ընկերներ:

Ք Ա Յ Լ Ի Ր Ա Ռ Ա Ջ

(Մառե Ենիսուզիասցեի)

Քայլիւր առնջ, ընկեր,
Մեր քայլերով հաստատ —
Այս պաշքարում անդուլ
Հաղթանակող լինենք,
Մեր աշխարհում աշտոր
Միլիոն կրծքեր հպարտ,
Դեպի գրոհ նետված,
Հաղթանակով կելնեն:

Մեր աշխարհում աշտոր,
Հոնգլունով վարար,
Յերգ են հլուսում հիմա
Հազար խոսուն մատոր,
Հազար դադգյան չերկաթ
Յեւ զինամո արթուն —
Գործ են կերտում հիմա
Մեր դարկերին հլու:

Մեր աշխարհում աշտոր,
Հորդ ավլունով վարար,
Կյանք են կերտում հիմա
Միլիոն ձեռքեր ջլուտ,
Միլիոն սրտեր արի
Յեւ ժիր կրծքեր հպարտ,
Մարտ են մղում հիմա —
Ապագայի համար:

Այս մարտերում անեղ՝
Ով ֆրոնտում չեղավ —
Նա չի կարող լինել
Մեր շարքերում անվախ,
Ով պաշքարում չեղավ —
Նա չի կարող հաղթել,
Նա չի կարող տեսնել
Մեր ապագան պայծառ:

Քայլիւր առնջ, ընկեր,
Մեր քայլերով հաստատ,
Այս պաշքարում անդուլ
Հաղթանակող լինենք,
Մեր աշխարհում աշտոր
Միլիոն կրծքեր վստահ,
Դեպի գրոհ նետված
Հաղթանակով կելնեն:

1931 մայիսի 13

Բ Ա Ջ Ո Ւ Կ Ն Ե Ր

Յերբ արևն է վառում
Կատարներն հեռավոր
Յեվ շարժումն է սկսվում աշխարհում,
Շչակներն են սուլում,
Ոթոներն սլանում
Յեվ քայլերն են զնգում բյուրավոր:

Բազուկներն են լինում,
Բազուկներն են զինվում,
Բազուկներն են մտնում պալքարի,
Մեր լերկիրն է ծաղկում,
Մի գիգանտ է դառնում —
Յերկաթի, պողպատի ու քարի:

Յեվ ներկան տենդագին —
Պալքարի վառ բովում
Կերտում է ապագան լուսավառ,
Յերգերում խնդագին,
Կրճքերում թնդացող —
Հոսում է նոր խինդը հուսավառ:

1931 մայիս

Ն Ո Ր Տ Ե Մ Պ Ե Ր Ո Վ

Մենք ենտուղիաստ, հարվածային
Յեվ գրոհով լեյաժ մարտի,
Պալքարների կիող բովում,
Վորպես խիզախ մարտիկների,
Արշավում ենք նոր տեմպերով,
Վառ ավյունով միահամուռ,
Մեր կարծրացող ժիր կրճքերով
Յեվ ձեռքերով լերկաթակուռ:

Այս որերի գրոհներում,
Աշխատանքի ջահով անմար,
Բոլոր լինող զավողներում —
Բանակներով մեր անհամար,
Մենք աներկյուղ, մենք անսասան,
Մենք կառուցող, ստեղծագործ —
Պիտի կերտենք մեր ապագան,
Վորպես խիզախ քանդակագործ:

Մեր տեմպերից բալլերկլան,
Մեր լեռանդից ուժակորով —
Գործ են կերտում ձեռք ու մկան,
Մուրճ ու անիվ լերկաթակամ.
Բյուր ձեռքերով ամրամկան,
Յեվ կրճքերով խանդավառվող —
Մենք կերտում ենք մեր ապագան
Հրդեհի պես հրավառվող:

1931

Յերբ դրսում ձյունն և ու ցուրտ և սաստիկ,
 Ու սառցի վերմակ քաղաքի վրա,—
 Գործարանների չերգը ինդուստրիկ
 Աշխուժացնում և չերակներն չերկրի,
 Գարնան հորդահոս գետերի նման,—

Յերբ աչն կիսաշեն բարձր շենքերի
 Յերկնքում ցցված կոնտուրների մոտ
 Յեռում և գւրծը, ամուր ձեռքերից,
 Նոր կյանքը կերտող կրճքերից տենդոտ,
 Յեվ նոր յեռանդով գործում են նորից
 Ենտուզիաստների բանակաները բլուր,—

Հուզվում և կուրծքդ ու վորպես ալիք,
 Լեռնանում աչնպես հորձանքով հուլի,
 Վոր կրճքից թռչող չերգերդ գողտրիկ —
 Փռվում են շաչող չերկաթի չերգի
 Ու շառաչունով փռվում աշխարհում,
 Ստեղծում համերգ թնդացող գործի:

Յեվ չերգդ չերկաթ զնգում և անպարտ,
 Վորպես հաղթանակ մի քաղցր գաղմի
 Հորդուն չեռանդի ու ենտուզիազմի,
 Վոր չերկիրը մեր չերկաթն ուղմիկ —
 Առաջ սլանա հաղթող ու հպարտ:

1931 հունվար

Պաշտում են ումբերը լեռան խորքերում:
 Խոր-խոր կիրճերում վայրի ձորերի,
 Գործում են զարկեր խրոխտ շարքերում,
 Խրոխտ շարքերում չեղնող նորերի:

Քանդվել են ձորերը, ձգվել տունեկներ,
 Գնացքն և թռչում ձգված ուլակերով,
 Գծում և մի ձեռք նոր-նոր քարտեզներ,
 Նոր-նոր պլաններ վառված հուլիներով:

Բռնել են սյուները գյուղերի ճամբան,
 Հորդում և լույսը մութ-մութ տներում:
 Հանգչում և հանդարտ նավթի հին լամպան,
 Նավթի հին լամպան բոլոր հյուղերում:

Կանգնել են շենքերը խրոխտ շարքերով,
 Գործի չեն մտել նոր-նոր զավողներ,
 Հին կյանքը՝ կորչում և բոլոր բարքերով,
 Բոլոր բարքերով անցած դարերի:

II

— Ո՞վ ե կերտել այս շենքերը,
Այս շենքերը հրաշագործ:

— Բանվոր մարդկանց ժիր ձեռքերը,
Ժիր ձեռքերը ստեղծագործ:

— Ո՞վ ե քանդում այն նոր հանքը,
Այն նոր հանքը ժայռերում:

— Միլիոնների հաղթող կամքը,
Հաղթող կամքը անդադրում:

— Ո՞վ ե փոխում ընթացքը հին,
Ընթացքը հին — ջրերի:

— Միլիոնների ուժն ամենի,
Ուժն ամենի ձեռքերի:

— Ո՞վ ե լելել գոռ պալքարի,
Գոռ պալքարի վերջնական:

— Միլիոնների բանակն արի,
Բանակն արի, հաղթական:

III

Որերում այս կարմիր, արևոտ ու խնդուն
Հազարներն են լինում ներքնատան խորքերից,
Հազարներն են մուրճով խորտակում ու քանդում
Հին պատերն հողաշեն, մխտոված թոնիրից:

Հազարներն են հարթում ճամբաներ ծուռ ու մուռ,
Անտառներ ծառախիտ ու ձորեր անարև,
Յեվ կամքով հաղթական, ձեռքերով ամրակուռ
Միլիոններն են մտնում անդիջում պալքարի:

Նոր բացվող հանքերում, նոր գործող ցեխերում
Դադգլահներն են լերգում ժիր լերգեր լեռանդոտ,
Բարախող սրտերում, ամբացող կրճքերում —
Վառ հույզերն են ուռչում, փոթորկոտ ու տենդոտ:

Փրաջան այս դարի համերգում սիմֆոնիկ
Պալթուններն են թնդում թնդունով վիթխարի,
Խոլ գետերն են փոխում ընթացքը դարավոր
Յեվ շարժվում ցուցմունքով մեր դարի հանճարի:

Նոր շենքերն են ցցվում դեպ լերկինք արշավող,
Սլանում դեպ արև բարձրաբերձ պատերով,
Գիգանտներն են ծնվում լայնարձակ դաշտերում
Ու գործում անընդհատ մեր դարի գեներով:

Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Այս որերի գոռ պալքարի մարտերում —
Կոմսոմոլիա, հառանջ, անվախ, աննահանջ,
Վորպես ռազմիկ, վորպես մարտիկ, աներկյուղ,
Նոր արշավի հզոր տեմպեր դու առած:

Կրճքիդ հպարտ, անծայրածիր, լախալանջ,
Աշխատանքի շքանշան վեհանիստ,
Յեւ ու հորդիր, ու գրոհիւր լեռ ու լանջ —
Դու աներկմիտ, ու աներկյուղ, անսասան:

Ամեն ցեխում, ամեն գյուղում, քաղաքում —
Զոկատները՝ հարվածային, ենտուզիսատ,
Մարտիկներդ անծայրածիր աշխարհում
Յեւ խորտակող, և կառուցող, և անսասան:

Ինչքան բերդեր, ինչքան զիրքեր անառիկ —
Գրոհներով գրավեցիր ու անցար,
Դու միշտ անհաղթ, դու միշտ անսասան գոռ մարտիկ
Յեւ հրդեհող, և ստեղծող, և անկանգ:

Հիմա թռիր, ու բարձրացիր դեպի վեր
Յեւ գրավիր չեթերալին բարձունքներ,
Շուրջդ լինի սավառակ ու պրոպելլեր
Յեւ թշնամիդ թափի անհույս արցունքներ:

Այս որերի գրոհներում փառապանծ —
Կոմսոմոլիա, հառանջ, անվախ, դեպի վեր,
Միշտ ծածանիր կարմիր դրոշ չերկնամբարձ,
Մինչև պայծառ հաղթանակի նոր ափեր:

Յ Ե Ր Ե Կ Ո Ւ Ա Յ Ս Ո Ր

Սլաքը անկանդ առաջ ե թռչում,
Ժամերն են դառնում որեր, տարիներ,
Բաց մենք որերից առաջ ենք վազում
Մեր հաղթ տեմպերի անխափան վազքով:

Յերեկ չե՞ր միթե, վոր փողոցներում —
Վխտում եր մարդկանց մի սոված բանդա,
Վոր մառազների չերգի տակ հնչուն —
Պարում եր հիվանդ չերկիր մի տկլոր:

Յերեկ չե՞ր միթե, վոր մարտի լեւանք
Յեւ խորտակեցինք դիրքեր անառիկ,
Յեւ մեր ձեռքերով առաջին անգամ —
Դրոշը բոսոր վեր ծածանեցինք:

Յերեկ չե՞ր միթե, վոր այս փողոցում,
Հենց այս շենքի մոտ քարակերտ ու մեծ,
Պալթեց մառազներ ընկերոջս կրճքում,
Յեւ վալը գլորվեց դիակն արնաների:

Բաց այսոր, դե տե՛ս, հենց այդ փողոցում,
Հենց այդ շենքի մոտ, բարձր ու հսկա,
Հորդել ե մի կցանք, վոր չերեկ չկար
Ու այսոր հաղթեց մեր այս աշխարհում:

Յերեկ չե՞ր միթե, վոր այս դաշտերում —
Վրոնում ելին բլուր գալլ ու բորենի,

Յեվ գեղջուկների չորցած տաշտերում
Աչքդ չեր տեսնի հատիկ ցորենի:

Այսոր լի ու տես՝ արձակ դաշտերում —
Հասկերն են հորդել բանակ-առ-բանակ,
Կոլխոդներիկները խինդը սրտերում՝
Յերգում են կյանքի սեր ու հաղթանակ:

Յերեկ չե՞ր միթե, վոր այս վայրերում
Ծուխ չեր բարձրանում մարած հնոցից,
Յեվ անգամ չկար մատոր մի ուժգին,
Վոր կյանք ներշնչեր փոկին, լերկաթին:

Այսոր զնգում ե լերգը դինամի
Յեվ խինդը վառում ջահել սրտերում,
Վաղ առավոտից մինչ իրիկնադեմ,
Իրիկնադեմից մինչև առավոտ,

Մեր բանակն հսկա մտած դիրքերում
Ռուկերն ե վարում բլուր մաշինների,
Կուռ բաղուկներով նոր կյանքն ե կերտում
Յեվ համառ փոխում շուրջը շենքերի:

1931 մայիս

Լ Ե Ն Ի Ն

Այն ռվ ե նստել միլիոնների սրտում,
Ո՞վ ե բորբոքում լեռանդը անծիր,
Յեվ ռվ ե այսոր միլիոնների մաքում —
Վառել ջահը բորբ ու հրակարմիր:

Յերբ անծալրածիր աշխարհում այն հին
Յերգեց իր լերգը լերկաթը զնգուն,
Յեվ չչակներն արի այնպես զիլ կանչով
Գործի կանչեցին հազարներին անտուն,—

Այն ռվ եր, վոր իր լերակներում արի,
Զգաց լեռանդը լեյնող մարտերի,
Մագիլներում ճնշվող պրոլետարներին —
Այն ռվ եր խինդով գոչեց պալքարի:

Այն ռվ եր լեյալ վորպես մի հսկա
Ու վառեց ջահը հավիտյան անմար,
Պալքարի հանեց բանակներն անպարտ՝
Նոր կյանքի կերաման, գալիքի համար:

Մարտերով հրկեղ, հերոսական, արի,
Այն ռվ եր հաղթեց ստեպների լերկրում,
Հարթելով խութերն իր ճանապարհի՝
Յերկրում մեր փոքեց կառուցման բերկրում:

Այս գահակուրծան ընդվզումի դարում
Բլուր միլիոնների հորդ ենառվազմով՝



3358. 84

Լենինն և այսոր մեր ընթացքը վարում
Դեպի լուսավաչ ափերն գալիքի:

Յեւ այսոր կայտառ խինդով բորբոքված —
Միլիոնն և անդուլ չեռանդով կերտում,
Վորպես վառ անդրի սերունդների սրտում
Այդ նրա ջանն և աշխուժով վառվում:

Լենինն և նստել միլիոնների սրտում,
Խինդով բորբոքում չեռանդը անծիր,
Յեւ նա չե այսոր միլիոնների մտքում
Վառել ջանը բորբ ու հրակարմիր:

1931 հունվար

Վ Ե Ր Ե Լ Ք Ի Մ Ա Ր Տ Ե Ր Ո Ւ Մ

Յերբ վերջին ծխացող
Թշուառութը նիրհեց
Մեր յերկրում արյունով խորտակված,
Ու փովեց ամենուր
Մի շարժում հաղթական
Յեռանդի աշխուժով համակված,—

Շարժվեցին բանակներ
Կոշտացած ձեռքերի
Դեպ գրոհ վերելքի մարտերում,
Հորդեցին բանակներ
Ամրացած ուսերի,
Կառուցման մի չեռանդ սրտերում:

Զգվեցին դեպի վեր
Կոնտուրներ շենքերի
Յեւ ցանցեր անսահման դաշտերում,
Յերդեցին մաշիններ
Կոշտացած ձեռքերից
Յեւ թավրշը ծփաց արտերում:

Վառ խինդով վաղորդյան
Ծնվեցին դաշտերում
Բյուր կոլխոզ ու սովխոզ ընդարձակ,
Կոլեկտիվ ուժերով,
Առորչա մարտերում
Կովեցին անդիջում, համարձակ:

Գ Ա Ջ Ե Լ Լ Ա Ղ Յ Ո Ւ Յ Յ Ա Ն

(Հայաստանի խորհրդայնացման հասնամյակին)

Արդեն անցան, ու չքացան,
ու հալվեցին պատմութիւն մեջ
Անկրկնելի, անդառնալի
տասը տարի բոցով անշեջ:

Վորպես վառ ջահ, վորպես փարոս,
վորպես գործի շքանշան,
Աշխատանքի անգին հերոս, տես,
բարձրացան հազար արձան:

Քարակառույց խրոխտ շարքով,
վորպես կոթող աշխատանքի
Վեր խոյացան հազար շենքեր
ու խրվեցին կուրծքն չերկնքի:

Յեւ լիաթոք շնչեցին խոր
գործարաններ հազար-հազար,
Վոր մեր չերկրին շառաչուենով
շունչ տվեցին հերոսաբար:

Այն դաշտերում արնակալած,
ուր սղվամահ զիերն ելին,
Այսօր թափով հորձանք տվին
միլիարդավոր հասկեր վոսկի:

Այն հյուղերում բորբոսածածկ,
ուր վոր ձեթի ծուխն եր ծխում,—
Այսօր լույսի ծով ե կարծես,
վոր զինամից դուրս ե բղխում:

Վոսկեմշուշ այն լեռներում,
ուր հեր լավել չերկաթի չերգ,
Այսօր խանդով չերգն ե զնգում
ու ստեղծում մի վառ համերգ:

Յեւ վալրենի այն ձորերում,
ուր բնութիւն թաթն եր տիրում,—
Այսօր ուժի հիդրոշենն ե
լուսապայծառ նոր կյանք բերում:

Անապատի խորշակի մեջ,
ուր կարավանն եր ուղտերի,—
Այսօր զնգոց ու զբնգոց,
ու համերգն ե բյուր ունեւերի:

Գեղածիծաղ մեր նոր չերկիր,
զե զբնգա վառ զնգոցով,
Յերկաթ պատիր կուրծքդ հպարտ
ու սլացիր հաղթանակով:

Թշնամիներդ մահասարսուռ
թող վրնջան բուր զայրույթից,
Բայց քո կուրծքը թող բարձրանա
վառ չեռանդի հուզումներից:

Գ Ա Ջ Ե Լ Լ Ա Ղ Յ Ո Ւ Յ Յ Ա Ն

(Հայաստանի խորհրդայնացման հասնամյակին)

Արդեն անցան, ու չքացան,
ու հարվեցին պատմութեան մեջ
Անկրկնելի, անդառնալի
տասը տարի բոցով անդեջ:

Վորպես վառ ջահ, վորպես փարոս,
վորպես գործի շքանշան,
Աշխատանքի անգին հերոս, տես,
բարձրացան հաղար արձան:

Քարակառույց խրոխտ շարքով,
վորպես կոթող աշխատանքի
Վեր խոյացան հաղար շենքեր
ու խրվեցին կուրծքն չերկնքի:

Յեւ լիաթոք շնչեցին խոր
գործարաններ հաղար-հաղար,
Վոր մեր չերկրին շառաչեցնուով
շունչ տվեցին հերոսաբար:

Այն դաշտերում արնակալած,
ուր սովամահ դիերն ելին,
Այսոր թափով հորձանք տվին
միլիարդավոր հասկեր վոսկի:

Այն հյուղերում բորբոսածածկ,
ուր վոր ձեթի ծուխն եր ծխում,—
Այսոր լույսի ծով ե կարծես,
վոր զինամից դուրս ե բղխում:

Վոսկեմշուշ աչն լեռներում,
ուր չեր լավել չերկաթի չերգ,
Այսոր խանդով չերպն ե զնգում
ու ստեղծում մի վառ համերգ:

Յեւ վաչրենի աչն ձորերում,
ուր բնութեան թաթն եր տիրում,—
Այսոր ուժի հիդրոշենն ե
լուսապայծառ նոր կյանք բերում:

Անապատի խորշակի մեջ,
ուր կարավանն եր ուղտերի,—
Այսոր զնգոց ու զրնգոց,
ու համերգն ե բլուր ռեսերի:

Գեղածիծաղ մեր նոր չերկիր,
դե զրնդա վառ զնգոցով,
Յերկաթ պատիր կուրծքդ հալարտ
ու սլացիր հաղթանակով:

Թշնամիներդ մահասարսուռ
թող վրնջան բութ դալրույթից,
Բայց քո կուրծքը թող բարձրանա
վառ չեռանդի հուզումներից:

Յեւ թող բերկրին կրծքերը մեր
քո կրծքի հետը հավասար,
Ձե՛ վոր նրանք քեզ ենք տվել
պաշտարներում հերոսաբար:

1930 նոյեմբեր

Կ Ա Պ Ա Ր Ը

Մարտերում լերեկ կապարը գնդակ,
կապարը՝ մահը տարածող դարձած
Թռչում եր անվերջ — բանակից բանակ
Յեւ ժշում կառքն իր զոհերով բարձած:

Այդ նույն կապարով մենք մարտի լեւած
Գրոհ ենք տալիս պլանի վրա,
Մեր գործարանում լեռուն աշխատանք
Յեւ մեր ուղեղում պատկերը վաղվա:

Զվարթ աշխուժով լերգեցին նորից
Դադգյահները մեր ու մարտի լեւան,
Յեւ տառերը բլուր՝ ձուլված կապարից
Մարտի հանեցինք թշնամու դիմաց:

Ամեն մի տառը գնդակ է հիմա,
Վոր հառնում է այս բլուր կալոններից.
Յեւ դա զենքն է մեր անդեն որերի,
Վոր դրել ենք մենք այսօր պաշտարի:

Յերը վազը նորից սիգնալ վորոտա
Ու մեր թշնամին անցնի հարձակման,
Մենք այդ կապարից գնդակներ ձուլած՝
Կելնենք պաշտարի աշխուժով վառման:

Մինչև վերջին շունչ կերթանք գրոհի
Յեւ մեր բանակով կհաղթենք նորից,
Մեր բանակը կուռ, գոռ ու ամենի,
Մեր բանակն անհաղթ՝ պաշտարի որից:

Յեխում կանգնել եր գվարթ մի աղմուկ,
Հոնդում ելին դադգյաններն բոլոր,
Իրար չետեից ութմով մի հատուկ
Նվագում ելին ինչպես ամեն որ:

Քսան դադգյանից քսան նաբորներ
Արշավում ելին թղթերի վրա,
Յեվ գգաստ կանգնած ջահել բանվորներ
Թուղթ ելին դարսում սեղանի վրա:

Կանգնել եր աջնտեղ Արշակը նույնպես,
Նա կլադ եր անում դադգյանի վրա,
Ձեռքին բռնել եր վոսկրե կոստիկան
Քսում եր մեկ-մեկ դարսված թղթերին:

(Ձեռքերը անկամ շարժվում են առաջ
Ու թուղթը դնում դադգյանի բերնին,
Բաց չերբեք, չերբեք ուշք չի դարձնում
Տպվող թղթերի գործի վորակին):

Շարժում է հանկարծ իր ձեռքը ողում,
Գծում կորագիծ անհայտ մի պատկեր,
Յեվ ձեռքից նրա աջնպես աննկատ
Ընկնում է ներքև վոսկրե կոստիկան:

Ընկնում է ուղիղ նաբորի վրա
Ու շարժվում առաջ, բարաբանի տակ,
Ծանրության ուժից սղմում տառերին
Ու ջարդում նրանց մինչև խոր հատակ:

Ջարդվածքի ձայնից կարծես սթափված
Նայում է յետև, տարված թղթերին,
Յեվ տեսնում է նա, վոր թղթի վրա
Չկա վոչ մի բառ տպվող նաբորից:

Տոկն է ընդհատում և արագ թափով
Իջնում է կանգնած իր դադգյանի մոտ,
Տեսնելով ջարդված, թափված տառերին
Հիշում է ձեռքի վոսկրե կոստիկան:

Նրանից հիմա մնացել է լոկ
Վոսկրի փշրանքներ և ուրիշ վոչինչ,
Իսկ նաբորն անպետք, ջարդված ու խառնված
Լցվել է աջնտեղ, մեքենայի մեջ:

Այդ վերջ է ձեռքից ներքև ընկել նա
Ու ջարդել աչքքան կապարե տառեր,
Բաց ինքն, իհարկե, «մեղավորը չե»,
Լոկ պատահմունք է և ուրիշ վոչինչ:

Հավաքիր, ընկեր, ուշքդ քո գլխում,
Ուշագիր չեղիր գործի ժամանակ,
Թե չես մյուս անգամ, մի ուրիշ դեպքում
Կշարդես նույնիսկ ամբողջ մեքենան:

Պատասխանը տուր քո գործի համար,
Ջանքերդ լարիր մինչև վերջին ժամ,
Մեկտեղ պաշտարենք պլանի համար,
Յերկրին տանք կույտեր գրքի, պլակատի:

Ջախջախենք իսպառ հարվածով ուժգին
Դիմադրկության ալդ ոճը թունոտ,
Ազատվենք իսպառ փշացումներից
Ու նետվենք գործի իսկական ֆրոնտ:

Հազար մարտիկներ գլուղերում նստած,
Կամ թե արտերում թեժ գործի ժամին,
Յե՛վ կամ զավոդում դադգլահով կանգնած՝
Դիրք են պահանջում նրանք մեղանից:

Ձե՛ վոր դառնում ե չերկիրը մեր նոր
Խնդուստրիկ չերկիր, գիտության չերկիր,
Ու մեր դարգացման տեմպով անսովոր
Թուշում ե անկանգ դեպի նոր դիրքեր:

1931 նոյեմբեր

Յերբ տարիներ առաջ ընդունեցինք պլան
Մեր սլացող չերկրի հինգը տարվա համար,
Մեր շարքերից լավան լալահառաչ ձայներ
Բայլելիզմի «կարմիր ցնորքների» մասին:

Հրհռացին վոմանք «միրաժների» մասին
Ու ծաղրանքով լպիրշ վողջ աշխարհում ասին,
Թե բայլելիզմն ահա լարում ե նոր թակարդ,
Վորով պիտի վորսա ինքը իրեն միայն:

Վոմանք լացին բարձր, աղեկտուր լացով
Ու ահաբեկ չեղած մեր ընդունած տեմպից,
Նահանջեցին անկանգ առաջավոր դիրքից,
Գլուղվեցին ճամբին իրենց ամբողջ սարքով:

Բայց չկանգնեց չերեք կառքը անթեք թռչող,
Արշավանքի անցավ մեր դասակարգն արի,
Յե՛վ մարտերում դաժան, արյունալի ու թեժ,
Աշխատանքով կերտեց մի ֆուռդամենտ անսաստ:

Չդիմացան ամուր ու անառիկ բերդեր,
Խորտակվեցին նրանք մեր անհողողդ կամքից,
Ու մեր չերկրում տեմպով գրոհեցին առաջ
Նոր գիզանտներ հզոր բայլելիկյան գործի:

Բչուր բանակներ արի, հաղթ ձեռքերով ջլուտ
Իրենց չեաքում թողած մի հնդամյակ վսեմ,

Արդեն գործի անցան պահանջելով չերկրից
Նոր հնգամյակ հղոր — գիգանտներով հղի:

Նորից դեպի առաջ, դեպի նոր-նոր բերդեր
Կզրոհենք անկանգ մինչև վերջին կայան,
Վոր մեր չերկրում զնգան մետաղների չերգեր,
Խնդուտրացող չերկրի շոնգալից շնչով:

1931 դեկտեմբերի 2

ՌԱՊՈՐՏ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ

(Արտատեղիված կոմյերիտ սոմաերի փոխտեղակալներ
նվիրված համագործակցության)

Յեկած զավուդի կոմիտե շրջանից,
Ուր հիմա անդուլ պալքար ենք մղում,
Կանգնում եմ ահա ղեկավարիս դեմ՝
Ու խոսքս ասում ժիր կոմյերիտի:

Այն վառ որերում, չերք պլան կազմած
Յեկանք մենք մարտի — անվախ, աներկյուղ,
Վոմանք ահաբեկ վերցրած տեմպերից,
Յետ նահանջեցին իրենց դիրքերից:

Վողբացին վոմանք կերավող մեր չերկրի
Անհույս ու անհետ կործանման մասին,
— Պլանները ձեր — սին չերաղների,
Վառ ցնորքների մի փունջ ե — ասին:

Բացք մենք ջախջախած վաճառուներ աչդ
Յեկանք պալքարի պլանի համար,
Դժվար եր թեև աշխատանքը մեր,
Բացք մենք տոկացինք, հաղթահարեցինք:

Ավյունը չեռաց մեր չերակներում
Ու հորձանք տվեց ողակից-ողակ,
Ծնվեցին տոկուն, հաղթող բրիգադներ,
Անցան գրոհի, վորպես կուռ բանակ:

Յեւ կոփված վոգով աչդ թեժ մարտերում,
Տոմսը ձեռք բերինք կոմյերիտական,
Վոր կազմակերպված մեր խիտ շարքերով
Ավելի ուժգին դուրս գանք մարտադաշտ:

Յեւ դուրս չեկանք մենք մեր ուսին առած
Մեր մեծ հնգամյա պլանը վսեմ,
Գործի դրեցինք ամեն պտուտակ,
Ամեն նյարդաթել, ու ջիղ, ու մկան:

Արդեն փաստ է մեր հաղթանակը մեծ,
Վոր մենք ձեռք բերինք մղած պայքարում,
Բայց մենք չենք հանգչում դիրքերի վրա,
Մեր դեմ նորանոր բերդեր են յեղնում:

Միշտ բարձր պահած դրոշն արնավառ,
Ձեր բալլեիկյան ղեկավարութեամբ,
Մենք կեղնենք մարտի այնքան դժվարին
Յերկրորդ հնգամյա պլանի համար:

Յեւ հաղթանակով դուրս կգանք մարտից
Ու վոչ մի ամրոց մեզ չի դիմանա,
Ինչքան եւ դժվար խնդիրներ լինեն,
Ինչքան եւ լինեն նրանք անառիկ:

Մեր շարոցներում այժմ թող շարվեն
Կապարե տառեր, վորպես մարտիկներ,
Պետք չեղած դեպքում գնդակներ ձուլած՝
Մենք կպաշտպանենք լերկիրը մեր նոր:

Յ Ե՛ Լ, Կ ՈՄ Ս ՈՄ Մ Ո՛ Լ Ի Ա

Յեւ, կոմսոմոլիա, անցիր ֆրոնտ,
Արդեն հնչել է սիգնալը մարտի,
Անվախ, աներկչուղ, քայլերով խրոխտ,
Յեւ, կոմսոմոլիա, անցիր ֆրոնտ:

Հնչել է զանգը վճռական տարվա,
Անցել են մարտի բանակներ բազկի,
Մեզ համար թանգ են ժամերն այսօրվա,
Յեւ, կոմսոմոլիա, անցիր մարտի:

Յեւ, կոմսոմոլիա, անցիր գրոհի,
Պետք է գրավել այս բերդը համառ,
Նոր-նոր ցեխերում դադգլահներն ուժի
Դեռ հռնդում են կարծես ինքնիշխան:

Հզոր է մարդը տեխնիկան ձեռքին,
Արշավում է նա առանց հանգրվան,
Բերդը համառ է, իսկ դու անդիջում,
Յեւ, կոմսոմոլիա, անցիր գրոհի:

1931 հունիս

* *

Հարվածային միամսյակում չեռանդով
Գրոհեցինք դեպի պլան վառ խինդով,
Յեվ թվերը լեզու առած թռան վեր
Ու ցույց տվին մեր պալքաբլբ անվեհեր.
Բայց յերբ մտանք չերբորդ, չորբորդ յեռամսյակ,
— Ինչո՞ւ իջան մեր տեմպերը լավորակ:

* *

Շատերմային այս որերում պանծալի,
Յերբ հորդում է չեռանդը մեր լիուլի,
Արշավում է դեպի դադգլան, դեպի ցեխ,
Պատվում են անիվները ամեն տեղ,
Յերբ չեռանդը ծով է դարձել անհատակ,
— Ո՞վ է նրան մղում դեպի նպատակ:

* *

Մենք ել ունենք լուրջ մտածված պլաններ,
Վորին պետք են չեռանդով լի բանվորներ,
Վոր արտադրեն նախատեսված քանակը
Յեվ աչքաթող չանեն գործի վորակը,
Բայց ցեխերում մեր կադրերն են անվորակ,
— Ո՞վ է տալու այդ կադրերին լավ վորակ:

* *

Մեզ մոտ ել կան դեռ այնպիսի «ընկերներ»,
Վոր կոնծում են գինու լիքը վեդրոներ,
Յեվ լաւավոտ գործի գալով ուշացած,
Յերբերալով գործ են տալիս փչացած,
Կամ որերով թափառում են փողոցում.
— Ո՞վ է տալու այս բոլորին հատուցում:

1931 ինկոսմբեր

ՔԱՌՅԱԿՆԵՐ ՅԵՎ ԼՈՋՈՒՆԳՆԵՐ

Վոչ մի ըոպե ուշացում,
Վոչ մի գործի փչացում,
Պլանների կատարման
Գործերի մեջ աջացում:

Բախտը վճռող մարտեր կան,
Խանդավառվող սրտեր կան,
Կոմսոմոլիստ, ենտուզիստ,
Հարվածային սրտեր կան:

Մեծ մարտերի դարն է սա,
Պլանների դարն է սա,
Հարվածային աշխատանքի,
Սոցմրցության դարն է սա:

Մեծ գործերի տարին է,
Հաղթությունը նորինն է,
Հնգամյակի կատարման
Վճռողական տարին է:

Մեր պլանում ձեռքվածք կա,
Հետ ֆաշիստ չարիք կա,
Հարվածային աշխատանքի,
Սոցմրցության կարիք կա:

Սիմուլիանտին հարվածենք,
Գլուխ պահողին հալածենք,

Փողի համար թռչողին
Տեղն ու տեղը հարվածենք:

Անցնենք վճռող մարտերի,
Հուրը վառենք սրտերի,
Արդֆինպլանի կատարման
Հարվածային տեմպերի:

Ամեն ըոպե դադգյահիդ մոտ —
Հիշիր պայծառ դու մի մոմենտ.
Աշխատանքը քարն է միայն,
Դիսցիպլինան — կապող ցեմենտ:

Դեռ պահում ենք մեր ձեռքերում
Մեր դրոշը փոխանցիկ,
Յեթն չլնենք մեր զիրքերում,
Նա կդառնա սլացիկ:

Ճեղքվածքը փաստ է, և փաստը համառ
Մեզնից ուզում է լարված աշխատանք.
Դե կռվենք նորից պլանի համար
Յեւ ասպցուցենք իբրեւ պատասխան —
Մարդիկ են փոխում փաստերը համառ:

Մեր ճամբին միշտ ել դժվարին գործեր,
Դժվարին զիրքեր յեղեկ են ու կան,
Նրանք ծնվում են հաղթելու համար,
Բացյ մենք կհաղթենք կամքով հաղթական:

Պ Ո Ե Մ Ն Ե Ր

Սրահի միջում արձակ, ընդարձակ,
Սյուններն են կանգնել ուղիղ շարքերով,
Նրանց մեջտեղում՝ անվախ համարձակ
Վազոնետեղան ե թռչում ռեսերով:

Յեվ քսան դազգյահ իրարու մոտիկ,
Հերթի չեն կանգնել ուղիղ չերկու շարք,
Յեվ ժիր հոսանքի ուժից ելեկտրիկ,
Գործում են անկանգ որերում այս բարկ:

Շարժվում են բոլոր անիվները սե,
Գործում են փոքրիկ պտուտակները,
Յեվ հերթափոխով ծեղից մինչև ծեղ
Իրագործում են մեր պլանները:

Գրոհի այս բարկ որերում հրկեզ
Սրտերն են վառվել չեռանդի հրով,
Կրճքերն են հուզվել հուշվերով այնպես,
Վոր կլանվել են չեռանդուն պործով:

Ամբողջ զավոգում համաչափ զարկով
Յերգում են բոլոր մեքենաները,
Վորպես դիրիժոր մկանուտ բազկով —
Ղեկավարում են ենտուզիաստները:

Յերբ ժամացուցը խփեց ութ անգամ,
Զանգակը հնչեց ելեկարիկ ուժով,
Ամբողջ զավոդում նրանք ինքնակամ
Անցան գրոհի մի նոր աշխուժով:

Կանգնեցին շարքով դադգյաններ ժող,
Շարժեցին ձեռքերն լեռանդով լեցուն,
Յեվ դադգյանները աշխուժ զնգոցով —
Զնգացին կրկին մինչև իրիկուն:

... Բայց ահա հանկարծ լռեցին մեկտեղ
Յերկու դադգյաններ իրար կողք-կողքի,
Մնացին սառած նրանք հենց աչնտեղ,
Կարծես վախեցած տեմպերից ձեռքի:

Իջան շտապով դադգյանի վերից
Յերկու բանվորներն աչնտեղ աշխատող,
Դիտեցին բոլոր մասերը մեկից
Յեվ գլուխները թափ տվին հերթով:

Նրանք չհասկացան ինչն է փչացած,
Կամ ինչն է զգում նորոգման կարիք,
Յերկուսն ել ջանել, քսանը չանցած,
Դեռ չեն պատահել այդպիսի չարիք:

Տխուր հայացքով նայեցին շուրջը,
Տեսան աշխատող մյուս ընկերներին,
Վորոնք արշավով անցնում են առաջ
Ու իրենց թողնում ճամբի կեսերին:

Զգացին նրանք, վոր անգոր են դեռ,
Քանի չեն տիրել իրենց դադգյանին,
Ինչքան ել վերցնեն սլացող տեմպեր,
Այդպես կմնան Կես ճանապարհին:

* Մարդը հզոր է, լերբ իր ձեռքերում —
Ունի տեխնիկան, վորպես ոգնական,
Վոր գործադրում է բոլոր մարտերում
Ու դուրս է գալիս կամքով հաղթական:

*
*
*

Ահա մոտեցան լերկու վարպետներ,
Քննեցին իսկույն բժիշկների պես,
«Վերքը» գտնելով տվին ոեցեպտներ
Յեվ սկսեցին բուժման պրոցես:

Կես ժամից արդեն գործը վերջացրած,
Նրանք հեռացան այդ դադգյաններից,
Վորոնք աղմուկով, կարծես թարմացած,
Գործի գիմեցին վարժված ձեռքերից:

IV

Ամեն յերեկո, յերբ ժամը հասներ,
Հավաքվում էյին տասն և հինգ հոգի,
Բոլորն ել ջահել կոմսոմոլիստներ,
Բոլորն ել աշխուժ ընկերներ մարտի:

Կանգնում եր մեջտեղ տեխնիկը կարճիկ,
Բացատրում մասերն իրենց զազգչահի,
Յեվ նրանց առաջ նա մեկիկ-մեկիկ
Քանդում եր բոլոր մասերն իրարից:

Հետո նույն կարգով հագցնում եր իրար,
Պատրաստում նորից նույն զազգչահը մեծ,
Յեվ տոկը տալով գործում անդադար,
Մինչև վոր յերգեր իր յերգն հողմածեծ,

Յերբ սովորեցին ինքնուրույնաբար
Քանդել ու սարքել զազգչահը իրենց,
Նրանք լեռանդով ու հերոսաբար
Անցան գրոհի անվախ, աներեր:

Ել լինչը նրանց պիտի վախեցներ
Վերցնելու բարձր հաղթական տեմպեր,
Չէ՞ վոր տեխնիկան նրանցն է հիմա
Յեվ անեղ բերդը գրավված արդեն:

V

Ամբողջ զավոդում համաչափ զարկով
Յերգում են նորից մեքենաները,
Վորպես դերիժոր մկանուտ բազկով
Ղեկավարում են հնտուղիաստները:

Տեմպերն հասել են անսովոր չափի,
Թռչում են կարծես իրենց դերքերից,
Հասել են արդեն մի հզոր թափի,
Սրտերն են թնդում աշխուժ յերգերից:

Շարժվում են բոլոր անիմլերը սեգ,
Գործում են փոքրիկ պտուտակները,
Յեվ հերթափոխով ծեգից մինչև ծեգ
Ղեկավարում են հնտուղիաստները:

Իրար են խառնվել յերգերն յերկաթի
Յեվ սրտից բղխած յերգերը աշխուժ,
Կազմել են հզոր սիմֆոնիան կլանքի,
Վոր ներշնչում է լեռանդ ու նոր ուժ:

1931 սեպտեմբեր

Տպարանում անցյալ ամսին
Առաջացավ խոշոր ճեղքվածք,
Բոլոր ցեխերն մեկտեղ ասին.—
«Կազմակերպենք մեծ արշավանք»:
Ամեն բրիգադ թող աշխատի,
Վերջ տա բոլոր թրեւումներին,
Կազմակերպված մտնի մարտի,
Հասնի կյանքի նոր տեմպերին:
Այդ որվանից փոքերոված
Գործի գիմեց բրիգադը մեր,
Դեմը դժվար գործ էր դրված,
Բայց գործում էր նա անվեհեր:
«Հարկավոր է արագ շարել
Յեւ հասցնել ժամանակին,
Վողջ ճիգերը պիտի լարել,
Յերկրին տալ գիրքն առաջնորդի:
Վիթխարի լև գործն աչս դժվար,
Պահանջում է մեծ ճիգ ու ջանք,
Պիտի գործել հերոսաբար
Ու տալ ընտիր մի աշխատանք»:

Խորասուզված շարում են, տես,
Ահա կանգնած իրար դիմաց,
Վարժ ձեռքերն են շարժվում արագ,
Շարոցները չխկում կամաց:
Յեւ ժամ առ ժամ բազմանում են
Բանակները բյուր տառերի,

Նման լեռնոտ չերկրների
Մութ, ծառախիտ անտառներին:
Վորպես աշխուժ, ժիր մարտիկներ
Աչքերի դեմ շարողներ
Կանգնում են բյուր տառեր, բառեր
Յեւ տողերը դեկավարի:
Թվում է թե իրենց մոտիկ
Կանգնել է մեծ դեկավարը,
Փոթորկալի աչս որերի
Թռչող նավի նավավարը:
Հասակը կարճ, փոքրիկ միրուք,
Աչքերում խոր իմաստություն,
Կանգնել է նա տրիրունացում
Ու գոչում է՝ «ազատություն...»
Դառնում է շուրջ, ձեռքը պարզում
Ու պատկերում չերկու աշխարհ,
Մեկը չեւոյ ծաղկող կյանքի,
Մեկը մեռնող դասակարգի:
Մի տեղ կյանքն է վերաշինվում,
Գործարաններ կանգնում հերթի:
Մեքենաներ դաշտը հանվում,
Դրվում չեռուն աշխատանքի,—
Մի տեղ գործն է միշտ պակասում,
Գործարաններ փակվում հերթով,
Յեւ ծփում են փողոցները
Անգործների բանակներով:
Չունեն նրանք հաց, աշխատանք,
Կամ ազատ կյանք աչս աշխարհում,
Նրանց կյանքն է անվերջ տանջանք,
Ու չարչարանք մութ բանտերում:

Խոսում ե, տես, առաջնորդը
 Ու բորբոքում հուրը սրտի,
 Մղում դեպի պայքարը թեժ,
 Հանում վերջին, վերջին մարտի:
 Շուրջը նրա խոնվում են
 Միլիոնները զավոզների,
 Միլիոնները հողի, հանգի,
 Սարկացած գաղութներին:
 — Հանց... աշխատանք... ազատութիւն...
 Գոչում են նրանք միաբերան,
 Վորպես գարնան գետը հորդուն
 Հորձանք տալով իրար վրա:
 Դառնում է շուրջ ձեռքը պարզում,
 Խրոխտաբար աչսպես ասում՝
 — Կռիվ ու մահ պալատներին,
 Խաղաղութիւն խրճիթներին...

... Հանկարծ ուժգին զրնգում են
 Զանգակները ելեկտրական,
 Յեւ ըրեգաղը արթնանում է
 Տեսիլներից հերոսական:
 Հերթափոխի ժամն է հասել,
 Դուրս են գնում բանվորները,
 Նորերն արդեն ներս են վազել
 Յեւ հագնում են գոգնոցները:
 Յերբ են անցել ժամերն այդքան,
 Վճնց են թռել անհետացել,
 Այդ չգիտի ըրեգաղան,
 Վոր գործում է հերոսաբար:

Յեւ անցնում են ըոպները,
 Աշխատանքն է սահում առաջ,
 Հոնդում են մաշինները
 Ու բարձրացնում շաչ ու շառաչ.—
 «Հարկավոր է արագ շարել
 Յեւ հասցնել ժամանակին,
 Վողջ ճիգերը պիտի լարել,
 Յերկրին տալ զիրքն առաջնորդի»:
 Ու առգորված աշխատում են,
 Ավարաելու գործը իրենց,
 Յեւ սհա, տես, բազմանում են
 Բանակները այս կապարե:
 Զըխկչիկում են շարոցները,
 Տառերն են ձիգ կանգնում հերթի,
 Յեւ տող առ տող բանակ կազմած
 Սպասում են կարծես չերթի:

Ժպտում են, տես, դեմքերը ջինջ,
 Դեմքերը պարզ, բանվորական,
 Յեւ ինչ են նրանք գոռ պայքարի
 Այս որերում հերոսական:
 Վաղը կելնեն դրքերն անթիվ,
 Կվողողեն չերկիրն ամբողջ,
 Կգրոհեն թշնամու դեմ,
 Վորպես մարտիկ քաջ ու առողջ:
 Վորպես գնդակ մի կապարի,
 Վորպես նազան մի մահատու,
 Պիտի հնչի ամեն մի բառ,
 Ամեն մի խոսք ու թմով, հատու:

Յեւ մարտերում թեժ ու զաժան,
 Կռիվներում արշուճալի,
 Ուր ուժերը պիտի թնդան
 Ու վորոտան համագարկեր, —
 Ընկած դեմից բանակների
 Պիտի փռեն ուղի մի պարզ,
 Ուղի մի վառ և ուղղաձիգ,
 Դեպի գալիքն անապական:
 Յեւ կթռչեն նրանք առաջ,
 Հարթած խութերն ճանապարհի,
 Դեպի գալիք կարմրաշառաչ,
 Դեպի ափեր նոր աշխարհի:

1931 զգոստոս

Հ Ե Ր Ո Ս Ա Կ Ա Ն Գ Ի Շ Ե Ր

Մեքենայի մոտ, սանդուխքի վրա,
 Կանգնել ե անա կոմյերիտ վաղոն,
 Թափով դառնում են ձեռքերը նրա,
 Դադգյանի վրա նա թուղթն է դարսում:

Ամեն առավոտ գործն սկսելիս,
 Սրբում ե մաքուր դադգյանը իրա,
 Ինչպես մարտիկն է հրազենը լուղում
 Ու պատրաստ կանգնում զրոհի համար:

Սիրում ե աչքան նա իր դադգյանին,
 Վորպես լավ ընկեր գործի, պաշտարի,
 Վոր միշտ ել տեմպով գործում ե անկանդ
 Ու անդավաճան չենում պաշտարից:

Հիշում ե վաղոն աչքան, աչքան պարզ
 Աչն որը պաշտառ ու նշանավոր,
 Յերբ ցեխը մտավ տեխնոուկը կարճ,
 Ձեռքերում պահած թղթերի մի կույտ:

— Մինչև վաղ կեսոր պետք ե տպագրել
 Այս գիրքը շտապ ու արժեքավոր,
 Վաղը կոմկուսի համագումարն ե,
 Իսկ սա կենսական նյութերն են բոլոր:—

Ասաց նա աչքան ազդու մի տոնով,
 Խոսվածքի վոճով աչքան գործնական,

Վոր յերակներում ջահել Վաղոյի
Ավլունը յեռաց ու հորձանք տվեց:

— Յես կտալադրեմ մինչև առավոտ,—
Ասաց նա վստահ իր ուժի վրա,
Յեվ լուրթ աչքերում փայլեց անծանոթ
Մի հուր հավատի ու հերոսութիւն:

Բայց դեմում կանգնած դազգյահի մոտից
Հանկարծ բարձրացաւ ծաղրանքի քրքիշ,
Կանգնած եր աչնտեղ պրոպուշչիկ Համոն
Ու ծիծաղում եր ատամները բաց:

— Սրան մի մտիկ, «հարվածային» ա,
Գիրքը մի գիշեր պտի պրծացնի,
Աղա, մուղաթ կաց. թե ամոթով
Կմնաս հանկարծ ջարդած տաշտակով:

— Լոգր, անամոթ, մեր շարքերից պողպատ
Իզուր չեր, վոր մենք դուրս վոնդեցինք.
Քեզ համար ինչ են պլան, աշխատանք...
Տեղդ աչնտեղ ե— քեֆերն ու գինին:—

Ասաց բարկացած կոմյերիտ Վաղոն,
Հետ դարձաւ կրկին դեպի դազգյահը,
Ձեռքերը նրա շտապ շարժիցին,
Ու հռնդացին զույգ անիմները:

Շտապ վերջացրեց տավոյ նաբորը,
Դազգյահում գցեց նաբորները նոր,

Կրկին շարժվեցին զույգ անիմները,
Յեվ գործը թնդաց հաղթական տեմպով:

Յեվ հանկարծ նրա աչքերի դիմաց
Տավոյ նաբորից հառնեց մի պատկեր,
Ու թվաց նրան, թե գիրք չի տպում,
Դիտում է յերկրի պայծառ կինոլենտ:

Ահա Քիմշինը հառնում է աչնտեղ՝
Աչն անտառապատ լեռների գրկում,
Ուր թափառել են վայրի գազաններ
Ու մարդն է ապրել կպած չոր հողին:

Ահա Դեմբեղը վշտում է աչնտեղ
Վայրի գազանի անեղ մոռունչով,
Ուր հիմա թափով լեւել են մարտի՝
Հոսանքը նրա սանձելու համար:

Յեվ աչդ պալքարի անեղ մարտերից
Ծնվում է ահա Ձորագետը սեղ,
Վոր վաղվա որին, վորպես նոր արե,
Լույսը տարածի շրջակա գլուղեր:

Աչն խորը ձորից բարձրանում է վեր
Ծխնելուղը հաղթ պղնձաձուլի,
Վոր յերկրից խլի պղնձի տոններ
Ու մաքուր գտած նորից տա յերկրին:

Ահա Յեմշինը. հաղթ կամարներով
Բարձրանում է վեր կորպուսը նրա

Հենց այն վայրերում, վորտեղ դարերով
Յեղեղ են ջարդերն այն ազգամիջյան:

Ամեն տեղ նույնն է պայքարը բորբոք,
Ամեն տեղ նույնն է քրտինքը թափվող,
Յեւ հաղթ տեմպերից չերկիրն է փոխվում,
Դառնում ինդուստրիկ հաղթական չերկիր:

Այս լենտը պայծառ, վոր այնքան արագ
Դադգլխանում տպվող համառ թվերից
Հառնեց Վաղոյի հայացքի դիմաց
Ու արագությամբ չքացավ նորից,—

Ջահել Վաղոյի խնդացող սրտում
Լցրեց հույզերի թնդացող հոսանք,
Ավյուռնը յնոաց ջրուտ ձեռքերում
Ու գործը թնդաց հաղթական տեմպով...

* * *

Յերբ առավոտյան, ցեխը մտնելով,
Տեխղեկը կանգնեց Վաղոյի կողքին,
Տեսավ սեղանին դարսված շերտերով
Տպված թերթերը պահանջվող գրքի:

Յերբ վերջին անգամ տպվեց մի թերթն էլ
Ու դադգլխանը հաղթ լռեց փնջոցով,
Վաղոն ցած իջավ դադգլխանից սիրած,
Դնառ աչքերում հաղթության ժպիտ:

Խինդը պարուրեց դեմքը տեխղեկի
Տեսնելով տպված գրքի հերոսին,
Վոր բայլչեկի վճռականությամբ
Խոսքը վերածեց իրական գործի:

Յեւ այդ գիշերը, վոր անցավ այդպես
Թնդացող գործի սահուն ռիթմերով,
Գործը վերածեց փառքի, պարծանքի
Ու հերոսության անհուն պայքարի:

1932 հունիս

Ա Ն Յ Ա Մ Ո Ւ Ղ Ի Ն

Տպագրող ցեխի լերկար սրահում,
Իրար մոտ կանգնած ուղիղ շարքերով,
Դադգլահներն լերկաթ ելեկտրո ուժից
Հոնդում ելին ուժգին թնդունով:
Թնդում ելին հաղթ հարկերը շենքի:
Տիրել եր ողում կապարի փողին:
Բուրում եր մաքուր բենդինը Բագվի
Ու պահում զգաստ աշխատողներին:
Տաս որ եր անցել այն որից շքեղ,
Յերը տպարանում առաջին անգամ,
Վորպես նախնական մի փորձ բոլորին
Յեխը անցկացվեց նոր անտհաշվարկի:
Յեվ դրա համար տպագրիչներին
Բանակի ուսին իջել եր ծանր
Մի նոր լրջութուն: Ել ռվ կարող եր
Կատարել մի գործ ու ցեխի առաջ
Չտալ պատասխան այդ գործի համար:
Չէ՞ վոր անցել եր հաշիվը նախկին,
Յերը գործն արվում եր ինչպես պատահեր,
Յեվ այդ պատճառով գործի վորակին
Նայել մատների նեղ արանքներից:
Հիմա դարձել եր պատասխանատու
Ամեն մի բանվոր իր գործի համար,
Վորի պատճառով բրակն եր իջել
Ու առաջ թռչել վորակը գործի:

Յեխում կանգնել եր նոր մի բաժանմունք,
Վորտեղից ուժգին չխկոց եր լսվում:

Յեվ դա չխկոցն եր փայտե համրիչի,
Վոր գումարում եր, հանում, բաժանում,
Պատրաստում թվեր այդ տասը որվա:—
Բախտը վորողող կարևոր թվեր,
Վորից կախված եր արդյունքը փորձի
Ու վողջ հետագա ընթացքը գործի:
Հենց դրա համար դադգլահների մոտ
Տիրում եր աշխուժ մի լարվածութուն,
Նակլադչիկների ձեռքերն լեռնագոտ
Դեպ թղթերն ելին շտապ արշավում:
Հոնդում ելին դադգլահներ լերկաթ,
Յեխում տարածում աշխուժ մի համերգ,
Վորպես գազաններ, անտառի խորքից,
Արշավում ելին քսան նարոններ:

Անցել եր արդեն ուղիղ լերեք ժամ,
Վոր բանակն այս մեծ անցավ գրոհի,
Բայց մի մեքենա կանգնած եր տխուր,
Սգում եր կարծես վիճակն Արշուխ
Չորս ամիս առաջ ամբողջ այդ ցեխում
Չկար մի բանվոր նրա պես գործող,
Նրա պես աշխուժ, կատակող, ուշիմ
Ու վորակապես լավ գործ արտադրող:
Յեվ դրա համար նրան գովեցին,
Բարձրացրին ցեխի կարմիր տախտակին,
Ու ջահելներին վողեորեցին՝
Հետևել նրա լավ որինակին:
Բայց այսօր նա դեռ չի լեկել գործի,
Դեռ չի հոնդում դադգլահը նրա,
Յեվ դա առաջին պատահարը չի
Ընթացքում վերջին լերկու ածական:

Խորհում ե խորը բերեալիւր Անդոն,
 Նայում ե ահա նրա դազգլահին,
 Մտքում վորոշում ինչ ել վոր լինի
 Պարզել այս բանի արմատն իսկական:
 Չե՞ վոր անդամ ե նա այն բերեալի,
 Վոր հայտնի չե իր կատարման տեսլով,
 Վորին չի հասել դեռ մի բերեալ
 Իր վորակական ցուցանիշներով:
 Չե՞ վոր ամիսներ, նույնիսկ տարիներ
 Յեղել են նրանք ընկեր հարազատ,
 Ել ինչո՞ւ թողնել, վոր վատ այդ ճամբով
 Նա ամբողջ ցեխում դառնա խախտառակ:
 Ի՞նչպէս հանդուրժել, վոր այս որերում,
 Յերբ թանգ ե նստում ամեն մի բոպեն,
 Ամբողջ ժամերով, նույնիսկ որերով
 Դազգլահը մնա անգործ ու անձայն:
 Այս բանի դեմ ե, վոր պիտի կովել
 Ու վերջ տալ բոլոր թրեւումներին,
 Վոր պլանն այն մեծ լրիվ կատարվի
 Այս նոյեմբերյան կարմիր որերին...

Խորհում եր Անդոն ու փնտրում միջոց:
 Ուղեղում նրա պտտվում ելին
 Հազար տեսակի լենթադրություններ:
 Այդպէս խորհելով շարժվում ե առաջ,
 Յեւնում ե փողոց ու քայլերն ուղղում
 Դեպի Արշուի բնակած շէնքը:
 Յերբ մտնում ե ներս, տեսնում ե իր դեմ
 Անկողնու վրա փռված Արշուին,
 Վոր դառնացանքով կրկնում ե նորից

Բաժակաճառը գիշերվա քեֆի:
 Տեսնելով հազի շորերը ցեխոտ,
 Աչքերը ուռած ու դեմքը անգուցն,
 Լսելով հանկարծ այդ զառանցանքում
 Սամսոն անունը, հասկանում ե նա,
 Վոր քեֆ ե արել Յերեան յեկած
 Անշուք մանկութեան ընկերներէ հետ,
 Վորոնց մասին դեռ մի ամիս առաջ
 Պատմել եր ինքը կոմիերիտ Արշուն:
 Ամբողջ հինգ տարում լերկրորդ անգամն եր,
 Վոր տեսնում եր նա Արշուին հարբած,
 Թեեւ նա հաճախ խմում եր գինի,
 Բայց չեր հարբել դեռ այդպէս խախտառակ:
 Խորհրդը նրա փոխվում են հանկարծ
 Մի արագընթաց պտտվող ֆիլմի,
 Յեւ հիշում ե նա այնքան, այնքան պարզ
 Առաջին որը իր հանդիպումի:
 Յերբ հոնդլունով նրան վողջուհեց
 Դազգլահը տպող իր լերդի ութմով,
 Չարմանքից բացված խոշոր աչքերով
 Նա դիտեց լերկար առանց շարժվելու:
 Չե՞ վոր իր կյանքում առաջին անգամ
 Նա տեսավ թե զերբն ինչպէս ե տպվում,
 Ել ի՞նչպէս պիտի նա չզարմանար,
 Չնայեր լերկար առանց շարժվելու:
 Յեւ նրա գլխում մի միտք արթնացավ,
 Համակեց նրա ելութունն ամբողջ,
 Յեւ նա վորոշեց ինչպէս ել լինի
 Մնալ, սովորել այս գործարանում:

Յերբ անցավ գործի, առաջին ամսում
 Տխուր եր միքիչ, վոր ել չեր տեսնում
 Մանկու թ հարադատ իր ընկերներին,
 Վորոնց հետ մեկտեղ այնքան գիշերներ
 Լուսացրել էին չերգով ու քեֆով:
 Մտքով նա հաճախ թռչում եր հեռու
 Փոքրիկ քաղաքի փողոցները լուռ,
 Վորտեղից իրենք լուսնյակ որերին
 Անցել են պարով, չերգով, նվագով:
 Մեկ-մեկ հիշում եր իր ընկերներին,
 Վորոնց հետ ինքը ամռան որերին
 Շրջել եր հաճախ այգիները մեծ
 Ու խաղող կերել նոր հասունացող:
 Հենց այդ որերից սովորել եր նա
 Գործածել հաճախ հարբեցնող գինի,
 Յերբեմն ակամա, չերբեմն իր կամքով,
 Յերբեմն ել կամքով իր ընկերներին:
 Այդպես եր այդտեղ, փոքրիկ այդ քաղքում,
 Շատ քչերն էին գինով չարբեցող,
 Մեծ մարդկանց համար ամոթ եր նույնիսկ
 Գինի պատրաստել ու չգործածել:
 Սովորել եր նա արձակ դաշտերին,
 Լայն այգիներին խաղողով լեցուն,
 Տեսնում եր նա միշտ կապույտը անծիր,
 Ու չերկինքը բաց պարզուն որերի:
 Հենց այդ պատճառով Արշուի համար
 Դժվար եր մեկից մոռանալ հինը,
 Չտեսնել իրենց հորիզոնը լայն
 Ու փակվել շենքի չորս պատերի մեջ:
 Բայց գործը շուտով հաղթում է նրան,

Ու ել չի տխրում առաջվա նման,
 Մերվելով ցեխի աշխուժ կյանքի հետ,
 Դեմքից չքվում է տխուրթյունն անհետ:
 Անցնում են որեր, դառնում տարիներ,
 Տքնում է Արշուն դադգյահի վրա,
 Ինքը Անդոն է գործը բացատրում
 Ու սովորեցնում ժամեր շարունակ:
 Յեվ նրանք այնքան կապվում են իրար,
 Դառնում իսկական հարադատ ընկեր,
 Վոր գործից հետո ամբողջ ժամերով
 Շրջում են նորից ծիծաղկոտ ու ժիր:
 Արշուն կարդում եր թերթերը որվա,
 Մեկ-մեկ անցնելով հողվածից հողված,
 Ինչպես արորն է չոր տափը վարում,
 Դեմ ընկնում խորքի մեծ-մեծ քարերին:
 Նա ամբողջ մտքեր և բազում բառեր
 Չեր կարողանում լրիվ հասկանալ,
 Անդոն եր նրան ոգնության հասնում
 Ու պարզաբանում մտքերն այդ դժվար:
 Շատ բան սովորեց նա այդ որերում,
 Սկսեց կապվել ժողովների հետ,
 Մինչև ճանաչեց նոր ընկերներին
 Յեվ սիրեց սիրով վառ ու ջերմագին:
 Չեր անցել տարին, չեր իրենց ցեխում
 Առաջին անգամ ինքնուրույնաբար
 Կանգնեց մի գործող դադգյահի գլխին
 Ու վարժ ձեռքերով սկսեց գործել:
 Հենց այդ որվանից նա դարձավ ընկեր
 Այդ հոնդացող չերկաթ դադգյահին,
 Վորին շոյում եր, փալփալում ձեռքով,

Սրբում, փայլեցնում ապակու նոճան:
 Կանգնած դադգյահի սանդուխքի վրա՝
 Նա թուղթ եր դնում դադգյահի բերնին,
 Մեկ-մեկ ընդհատում տոկը դադգյահի
 Ու նայում շուրջը իր ընկերներին: —
 Ահա Սարգիսը: Կրորիկ դեմքով,
 Սեփե աչքերով ու կարճ հասակով,
 Իր լավ վորակի գործերի համար
 Նա արժանացավ պարգևատրման:
 Յեվ անդամ է նա բոլորին հայտնի
 Կոմյերիտական աշն բրիգադի,
 Վորի դադգյահում տպվում է հիմա
 Մեծ առաջնորդի գրքերի սերիան:
 Ահա Սերոբը, Մուկուչը, Անդոն,
 Բոլորն ել ջահել, Կոմյերիտական,
 Վորոնք հայտնի չեն վողջ գործարանում
 Իբրև հերոսներ գործի վորակի:
 Նրանք, վոր այնքան մոտիկ են իրար,
 Վոր կարծես լինեն հարազատ չեղբայր,
 Վորոնց չի հաղթում և վնչ մի Ֆրոնտ,
 Յեվ վնչ մի ընկճող դժվար աշխատանք:
 Նրանք մարտիկ են թե գործարանում
 Յեվ թե դպրոցում ու ժողովներում,
 Ինչ աշխատանք ել չեթե ձեռնարկվի —
 Լինում են նրանք առաջին շարքում:
 «Ինչան լավ կլնի լինել նրանց հետ,
 Աշխատել այդպես լարված ու տոկուն,
 Հուշակվել իբրև պայքարի հերոս
 Ու գործել անվերջ, գործել անդադրում: —
 Այս միտքն եր արագ պտտվում անկանգ

Նրա ուղեղի խորը ծալքերում,
 Այդ միտքն եր նրան մղում անդադար
 Դեպի ջանքերի վերջնական լարում:
 Արշուն վորոշեց հասնել ու անցնել
 Իր ընկերների ցուցանիշներից,
 Չէ վոր վորակով պակաս չի այնքան
 Իր ընկերների գործի վորակից:
 Հասնել ու անցնել: Ահա խնդիրը,
 Վոր պիտի տեմպի ցուցանիշ դառնա,
 Յերկրին տա հաղար նորանոր գրքեր,
 Պլանը աշն մեծ իրականանա:
 Լարեց ուժերը մինչև վերջին կաթ,
 Որ-որի աճեց քանակն ոտտիակի,
 Մինչև վողջ ցեխում նրանից առաջ
 Չմնաց մեկը, վորին նա զիջի:
 Հենց այդ ժամանակ գործերից հետո
 Սկսեց կարգալ ընթացիկ գրքեր,
 Դիմեց ցեխային բջջի բյուրոյին,
 Վոր ինքն ել դառնա մի կոմսոմոլիստ:
 Հիշում է Անդոն այնքան, այնքան պարզ
 Այն որը զվարթ, նշանակալից,
 Յերբ իրենց բջջի ընդհանուր նիստում
 Քննվեց նույնպես զիմուքն Արշուն: —
 Յերբ այդ ժողովում առաջին անգամ
 Նա կակաղելով սկսեց խոսել,
 Թե ինչո՞ւ ինքը մղվող պայքարում
 Չի կարող մնալ հետին շարքերում:
 Իր մեջ չեռանդ կա գործ կատարելու,
 Ակտիվ պայքարի, պարտքի հատուցման,
 Ել ինչո՞ւ ինքը հետ է մնալու

Իր կոմսոմոլիստ մյուս ընկերներին:
 Բարձրացան ծափեր, աղմուկ ու ծիծաղ,
 Հետո մի անտառ ջրուտ ձեռքերի,
 Վորոշվեց, վոր նա դառնա մի անդամ
 Մարտնչող աչն մեծ կազմակերպութեան:
 Հաջորդ որվանից ուժգին լեռանդով
 Նորից նա կպավ իր սիրած գործին,
 Մինչև պարծանքով նա արժանացավ
 Գործարանային կարմիր տախտակին:
 Նույն աչդ որերին նա դարձավ անդամ
 Վողջ ցեխում հայտնի աչն բրիգադի,
 Վորի բրիգադիքը ինքը Անդոն եր՝
 Անդամները վողջ՝ կոմյերիտական...

Այս ֆիլմն եր անա, վոր աչքան արագ
 Սահեց Անդոյի մտքի եկրանով,
 Այս անցած ուղին փառքի, պարծանքի,
 Վորով հայտնի էր իր ընկեր Արշուն:
 Յեվ հանկարծ փառքի ամրոցի գլխից
 Ճամբա չե բռնում նա դեպի անկում,
 Ինչպես հանդուրժել ու չձեռնարկել
 Նրան նորից լետ բերելու գործին:
 Յեվ նա ձեռնարկեց աչնպես վճռական,
 Ինչպես հատուկ և հարվածայինին,
 Ինչպես հատուկ և կոմկուսի ձեռքով
 Կոփված կոմյերիտ լերիտասարդին:
 Չե՞ վոր կոմբըջի կուլցուրոն արթուն
 Հսկում և իբրև մի ղեկավարի,
 Յեվ լեթե չառնես լուրջ միջոցառում,
 Վաղը կկանչի. դե պատասխանիր...

Կեսորյա արևն արդեն թեքվել եր,
 Յեխում կատարվել լրել հերթափոխ:
 Վարիչի փոքրիկ գրասենյակում
 Հավաքվել եր վողջ բրիգադն Անդոյի,
 Յերբ Արշույի հետ ներս մտավ Անդոն —
 Աչնպես լրջադեմ ու խորախորհուրդ:
 Բայց բրիգադի անդամները ժիր,
 Տեսնելով իրենց ընկեր Արշուն,
 Թափվեցին վրա ու կատակներով
 Ուզեցին նրան բերել աշխուժի:
 Սենյակը լցվեց հնչուն ծիծաղով,
 Պատերը կարծես լետ-լետ գնացին,
 Ինչքան ազատ և, ինչքան հարազատ
 Այս միջավայրը լավ ընկերներին:

— Ժամանակը չե զվարթ կատակի:—
 Նխառը սկսեց բրիգադիւր Անդոն:
 Այսոր կատարված փաստը խայտառակ
 Պատիվ չի բերում մեր բրիգադին:
 Արշույի մոտիկ ընկերը չես եմ
 Յեվ ամենից շատ սիրում եմ նրան,
 Բայց նրա գործած քայլը այսորվա
 Հանդուրժել չեմ կարողանում:
 Յեվ զրա համար խստիվ խոսքերով
 Դիմավորում եմ այսոր չես նրան,
 Վորպեսզի զգա հանցանքը իրա,
 Յետ դառնա բռնած իր ճանապարհից:
 Սիրելի Արշո, մեզ համար այսոր
 Դարձել ես դու մի լեող պրոգուլչիկ,
 Բանի վոր թողած աշխատանքը քո

Հարբել ես վորպես մի հարբեցողի:
Թողած դադգյահը, պլանն ալսորվա,
Փառքի ու պատվի աշխատանքը քո,
Ընկել ես ինչ-վոր «ընկերների» հետ,
Վորոնք ձգում են քեզ դեպի անկում:
Բայց քեզ չենք ուզում, վոր դու վայր ընկնես
Ու խալտառակվես վողջ գործարանում:
Հենց դրա համար ալսոր հավաքված
Քեզ զգաստության, ուշքի ցենք ընկում:

Լսում եր Արշոն գլուխը կախած,
Վորպես հասարակ դատապարտյալի,
Յերեկվա մոտիկ իր ընկերների
Ուժգնորեն ազդող խոսքերը ծանր:
Յեվ այդ խոսքերի ծանրության ներքո
Վերհիշում է նա քեֆը գիշերվա,
Վորտեղ նվվում եր մի հին քլամանչա,
Թառը հեկեկում հարբած ու անուժ,
Նրանց նվագի շփոթ շեշտի տակ
Պարում եր ինքը, կոմյերիտ Արշոն:
Հիշեց բոլորը, իր ընկերներին,
Վորոնց հետ ինքը հարբել եր այդ որ,
Յեվ խոր զվվանքի ալիքը հորդեց
Նրա տխրամած դեմքի վրայից:
Կարծես թոթափած լուծը ծանրության՝
Ժպտաց նա հանկարծ իր ընկերներին, —
— Թեև եմ, ասաց, անցածի վրա,
Յես ձերն եմ նորից, այս անգամ անդարձ:
Հերթից դուրս անգամ կաշխատեմ ալսոր,
Կծածկեմ տված պարտքս բրիգադին,

Ձեմ թողնի յերբեք, վոր իմ պատճառով
Բրիգադի դիրքը զավորում ընկնի:

Լըջացած դեմքերն իր ընկերների
Նորից բացվեցին ու պայծառացան,
Կարծես ազատած մեկին մահվանից՝
Նրանք հաղթողի ժպտով ժպտացին:
Կոշտացած ձեռքերն չխկացին իրար
Ու հաստատեցին մի պայմանագիր,
Վորի համաձայն Արշոն յետ դարձած՝
Բարձրացավ իսկույն դադգյահի գլխին:
Տոկը միացրեց լուծ դադգյահին,
Փնչոցով ուժգին անցավ նա առաջ,
Իր ձայնը խառնած ցեխի համեղին,
Յետեից թողեց նոր-նոր ոտտիսկներ:

Անցան ժամերը և զանգի ժամին,
Ժպիտը դեմքին ու հաստատակամ,
Յեխվարը կանգնեց ցեխի մեջտեղում
Յեվ նշան արավ գործը թողնելու:
Յերբ հռնդացող դադգյահները վողջ
Լռեցին, սառան իրենց տեղերում,
Յեխվարն սկսեց բարձրաձայն խոսել
Իրենց պլանի կատարման մասին:
Հայտնեց առաջին արդյունքը փորձի
Յեխում կիրառած նոր տնտեսաշվարկի,
Թվերը պատրաստ ողում հնչեցին
Ու ավետեցին նոր մի հաղթանակ:
Ամբողջ այդ տարում առաջին անգամ
Այդ տասը որվա պլանը իրենց

Նրանք կատարել, գերակատարել
 Ու շարժվել ելին իրենց ղեկավարից:
 Խինդը պարուրեց զեմքերը ջահել,
 Սրտերը թռան իրենց տեղերից,
 Յեվ հռժկու ձայնով ողուժ թնդացրին
 Հաղթության շեփուր, մարտական ուռա:
 Յեվ նոր յեռանդով անցան գրոհի
 Դեպի անառիկ բերդերը ամուր,
 Վորոնք բարդվել են նրանց ճամբերին
 Իրենց պլանի կատարման մարտում:

1931 նոյեմբեր—դեկտեմբեր
 Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Յ Ա Ն Կ

I. ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դեպի շտուրմ	5
2. Քայլի արագ	6
3. Բազուկներ	8
4. Նոր տեղափոխվել	5
5. Յերկաթի յերգ	10
6. Կառուցում	11
7. Քայլերգ	14
8. Յերկ ու այսօր	15
9. Լինին	17
10. Վերելքի մարտերում	19
11. Գաղել հաղթության	20
12. Կապարը	23
13. Ջախճախներ գիմազրկությունը	24
14. Բերդեր ու մարտեր	27
15. Ռազմաբան կոմյունիստական	29
16. Յել, կոմսոմոլի	31
17. Պատասխանի սպասող հարցեր	32
18. Քառյակներ և լուսուններ	34

II. ՊՈԵՄՆԵՐ

1. Բերդը գրավված	39
2. Վճռական գրոհ	44
3. Հերոսական գիշեր	49
4. Անցած ուղին	54

ՀՀ Ազգային գրադարան



NL0325966

ԳԻՆԸ՝ 10. 504.

27102

ՎԻՄ. ՆԿ. ԱՇԽ.
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

АВРОРА
ШТУРМОВЫЕ ДНИ
ГИЗ ССРА ЭРИВАНЬ

891.99
Ա-79